

Պատմություն - 2016

ՀԱՐՑԱՏՈՄՍ 1

9-րդ դասարան

I. ԹԵՍՏԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ (17 միավոր)

1) <<ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ>> (12 միավոր)

ա. Նշել ճիշտ պատասխանը: (0,5 X 8 = 4 միավոր)

1. Վանի թագավորության n ը արքայի օրոք կառուցվեց Թեյշեբահինի (Կարմիր Բլուր) քաղաքը՝

ա) Սարդուրի I բ) Ռուսա I գ) Ռուսա II դ) Սարդուրի II

2. Ե՞րբ է տեղի ունեցել Պարույր Հայկագունու (Նահապետի) գահակալությունը:

ա) Ք. ա. 612 թ. բ) Ք. ա. 605 թ. գ) Ք. ա. 590 թ. դ) Ք. ա. 580 թ.

3. Ո՞ր գորավարն էր Արածանիի ճակատամարտում պարտված հռոմեական զորքի հրամանատարը:

ա) Լուկուլլոս բ) Պոմպեոս գ) Կրասոս դ) Անտոնիոս

4. Հայոց n ը թագավորի օրոք ստեղծվեցին մաշտոցյան գրերը:

ա) Խոսրով IV բ) Պապ գ) Արտաշես Արշակունի դ) Վռամշապուհ

5. Տրդատ III-ին հաջորդեց նրա որդին՝

ա) Արշակ II-ը բ) Տիրանը գ) Խոսրով III-ը դ) Խոսրով IV-ը

6. Լևոն II Մեծագործը Անտիոքը գրավելուց հետո իշխանությունը հանձնեց՝

ա) Ֆիլիպին բ) Չաբելին գ) Ռուբեն-Ռայմոնդին դ) Կոստանդին Գունդստաբլին

7. Արևմտահայերի առաջին համագումարը կայացավ՝

ա) Կ. Պոլսում բ) Չմյունխայում գ) Փարիզում դ) Երևանում

8. Գրիգոր Հարությունյանը ՀԿ(բ)Կ Կենտկոմի առաջին քարտուղար ընտրվեց՝

ա) 1936 թ. բ) 1937 թ. գ) 1938 թ. դ) 1939 թ.

բ. Լրացնել կամ գրել պատասխանները: (1 X 4 = 4 միավոր)

1. Հայաստանի առաջին հանրապետությանը վերաբերող իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ: (1 միավոր)

ա) Հայաստանի անկախության հռչակումը

- բ) ՀՀ առաջին կառավարության և Հայոց ազգային խորհրդի անդամների ժամանումը Թիֆլիսից Երևան
- գ) Հայաստանի Հանրապետության երկրորդ գումարման խորհրդարանի (պառլամենտի) ձևավորումը
- դ) Բաթումի հայ-թուրքական հաշտության պայմանագրի ստորագրումը
- ե) Պետական համալսարան հիմնելու մասին ՀՀ կառավարության որոշումը

1	2	3	4	5

2. Մշակութային իրադարձությունները դասավորել ըստ դրանց ժամանակագրական հաջորդականության: (1 միավոր)

- ա) Աղաբաբյան դպրոցի հիմնումը Աստրախանում
- բ) <<Արշակ Երկրորդ>> օպերայի ստեղծումը Տ. Չուխաջյանի կողմից
- գ) Հայկական Մարդասիրաց ճեմարանի բացումը Կալկաթայում
- դ) Լազարյան ճեմարանի բացումը Մոսկվայում
- ե) Սանասարյան վարժարանի հիմնումը Կարինում

1	2	3	4	5

3. Կիլիկիայի հայ իշխանների գահակալման տարիները համապատասխանեցնել նրանց անուններին: (1 միավոր)

- | | |
|----------------|-------------------|
| 1. Ռուբեն I | ա) 1080-1095 թթ. |
| 2. Լևոն I | բ) 1169-1175 թթ. |
| 3. Թորոս I | գ) 1129-1137 թթ. |
| 4. Կոստանդին I | դ) 1100-1129 թթ. |
| 5. Մլեհ | ե) 1095-1100 թթ.. |
| | զ) 1175-1187 թթ. |

1	2	3	4	5

4. Հայ Արշակունի արքաների գահակալման տարիները համապատասխանեցնել նրանց անուններին: (1 միավոր)

- | | |
|-----------------|----------------|
| 1. Արշակ II | ա) 370-374 թթ. |
| 2. Խոսրով Կոտակ | բ) 350-368 թթ. |
| 3. Վարազդատ | գ) 338-350 թթ. |
| 4. Պապ | դ) 422-428 թթ. |
| 5. Տիրան | ե) 330-338 թթ. |
| | զ) 374-378 թթ. |

1	2	3	4	5

գ. Լրացնել պատասխանները: (1 X 4 = 4 միավոր)

1. Համապատասխանեցնել հեղինակների և նրանց ստեղծագործությունների անունները: (1 միավոր)

- | | |
|-------------------------|---|
| 1. Միքայել Չամչյան | ա) <<Տիեզերական պատմություն>> |
| 2. Հովսեփ Գաթրճյան | բ) <<Միսուն>> |
| 3. Ալեքսանդր Գրիբոյեդով | գ) <<Պատմություն Հայոց>> |
| 4. Սերգեյ Գլինկա | դ) <<Խելքից պատուհաս>> |
| 5. Մադաքիա Օրմանյան | ե) <<Հայ ժողովրդի պատմության տեսություն>> |
| | զ) <<Ազգապատում>> |

1	2	3	4	5

2. Տրված պնդումներից որո՞նք են ճիշտ: Ընտրել երկու պատասխան:

(0,5 X 2 = 1 միավոր)

- ա) 1699 թ. Իսրայել Օրին գալիս է Ռուսաստան և Պյոտր I ցարին ներկայացնում Ռուսաստանի օգնությամբ Հայաստանն ազատագրելու ծրագիր:
- բ) Պարսկաստանում և Անդրկովկասում տիրող իրավիճակին ծանոթանալու նպատակով Պյոտր I-ը Իսրայել Օրոն դեկավարությամբ պատվիրակություն է ուղարկում Պարսկաստան՝ նրան տալով ռուսական բանակի գնդապետի աստիճան:
- գ) Պատվիրակության նկատմամբ կասկածներ չհարուցելու նպատակով Օրին մեկնում է Եվրոպա, որտեղ պարսից շահին ուղղված նամակներ է վերցնում Հռոմի պապից և Գերմանիայի կայսրից:
- դ) Եվրոպայում ունեցած բանակցություններից հետո Իսրայել Օրին ժամանում է Վրաստան, հանդիպումներ ունենում վրաց թագավորի հետ, այնուհետև ուղևորվում Պարսկաստանի մայրաքաղաք Սպահան:

ե) Ռուսաստան վերադառնալիս Օրուն է միանում Գանձասարի կաթողիկոս Եսայի Հասան-Ջալալյանը, սակայն 1711 թ. Աստրախան քաղաքում Իսրայել Օրին հանկարծամահ է լինում, իսկ Եսայի Հասան-Ջալալյանը վերադառնում է Արցախ:

--	--

3. Տրված պնդումներից որո՞նք են ճիշտ: Ընտրել երկու պատասխան:

(0,5 X 2 = 1 միավոր)

ա) 1917 թ. փետրվարյան հեղափոխությունից հետո վերացվեց Կովկասի փոխարքայությունը, և երկրամասնում ստեղծվեց իշխանության նոր մարմին՝ Անդրկովկասյան կոմիսարիատը:

բ) 1917 թ. աշնանը Թիֆլիսում տեղի ունեցավ արևելահայերի համագումարը, որից հետո ստեղծվեց Հայոց ազգային խորհուրդը՝ Ավետիս Ահարոնյանի նախագահությամբ:

գ) 1917 թ. դեկտեմբերի վերջին Խորհրդային Ռուսաստանի կառավարությունն ընդունեց «Թուրքահայաստանի մասին» հրովարտակը (դեկրետը):

դ) «Թուրքահայաստանի մասին» հրովարտակով խորհրդային կառավարությունը ճանաչում էր Թուրքահայաստանի (Արևմտյան Հայաստանի) հայ բնակչության ազատ ինքնորոշման իրավունքը և դրա կենսագործման համար անհրաժեշտ էր համարում ռուսական զորախմբի առժամանակ մնալը Արևմտյան Հայաստանում:

ե) 1917 թ. մարտի 3-ին Բրեստ-Լիտովսկում կնքված հաշտության պայմանագրով Ռուսաստանը Թուրքիային էր վերադարձնում Արևմտյան Հայաստանում գրաված հողերը, նաև՝ Կարսն ու Արդահանը՝ պահպանելով միայն Բաթումի մարզը:

--	--

4. Տրված պնդումներից որո՞նք են սխալ: Ընտրել երկու պատասխան:

(0,5 X 2 = 1 միավոր)

ա) 1921 թ. մարտի 16-ին ստորագրվեց ռուս-թուրքական պայմանագիր, համաձայն որի թուրք-հայկական սահմանն անցնելու էր Ախուրյան և Արաքս գետերով՝ Թուրքիային թողնելով Կարսի մարզն ու Սուրմալուի գավառը:

բ) Պայմանագրի համաձայն «Նախիջևանի մարզը» ինքնավար տարածքի կարգավիճակով փոխանցվում էր Ադրբեջանի ինսամակալությանը, պայմանով, որ վերջինս դա կարող է զիջել երրորդ պետության միայն պայմանագիրը ստորագրած պետությունների համաձայնությամբ:

գ) Կարսի Անդրկովկաս-Թուրքիա խորհրդածոդովը կայացավ 1921 թ. սեպտեմբերի 26-ից մինչև հոկտեմբերի 13-ը:

դ) Կարսի խորհրդածողովում հայկական պատվիրակությունը, որի նախագահն էր ՀԽՍՀ արտաքին գործերի ժողկոմ Ալեքսանդր Բեկզադյանը, առաջ քաշեց միջնադարյան Հայաստանի մայրաքաղաք Անիի ավերակները վերադարձնելու, Կողբի աղահանքերը շահագործման վերցնելու և մի շարք այլ հարցեր, սակայն թուրքական պատվիրակությունը որևէ զիջման չգնաց՝ համառորեն պահանջելով պահպանել 1921 թ. ռուս-թուրքական պայմանագրի հոդվածները:

ե) Լեռնային Ղարաբաղի խնդիրը քննարկվեց Ռուսաստանի կոմկուսի կովկասյան բյուրոյի կողմից, որի 1921 թ. հուլիսի 4-ի նիստում ընդունվեց արդարացի որոշում Լեռնային Ղարաբաղը Խորհրդային Հայաստանին միացնելու մասին:



1	2	3	4	5

գ. (1 միավոր)

1. Համապատասխանեցնել հասկացությունները և դրանց բացատրությունները:

- 1) Դոմինիոն
 - ա) Անցում ձեռքի աշխատանքից մեքենայական աշխատանքի, արտադրության մեքենայացման գործընթաց, որի ընթացքում մանուֆակտուրային փոխարինեց մեքենագործարանային արտադրությունը:
- 2) Կոլեկտիվացում
 - բ) Անգլիայի և Ֆրանսիայի միջև 1904 թ. կնքված ռազմաքաղաքական դաշինք, որին 1907 թ. միացավ Ռուսաստանը:
 - գ) Գերմանիայի, Ավստրո-Հունգարիայի և Իտալիայի միջև 1879-1882 թթ. կնքված պայմանագրերի արդյունքում ձևավորված ռազմաքաղաքական խմբավորում:
- 3) Արդիականացում
- 4) Արդյունաբերական հեղաշրջում
 - դ) Հասարակական կյանքի բոլոր ոլորտներն ընդգրկող փոփոխություններ, որը համապատասխանում է հասարակական առաջընթացի տվյալ ժամանակի պահանջներին և զարգացման մակարդակին:
- 5) Եռյակ դաշինք
 - ե) 1920-1930-ական թթ. ԽՍՀՄ-ում իրականացված գյուղատնտեսության բռնի վերափոխման քաղաքականություն, որն ուղեկցվում էր գյուղացիական սեփականության նշանակալից մասի հանրայնացմամբ
 - զ) Նախկին Բրիտանական կայսրության ինքնակառավարվող տարածք կամ երկիր, որ մինչ այդպիսի իրավունքներ ստանալը համարվել է Մեծ Բրիտանիայի գաղութ: Դրանցում պետության ղեկավարը համարվում էր Անգլիայի թագավորը:

1	2	3	4	5

II. ՊԱՏԱՄԽԱՆԻ ԱԶԱՏ ՇԱՐՄԱԴՐԱՆՔՈՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ

(3 միավոր)

1. **Հայկական հարցը Փարիզի խորհրդաժողովում: Սերի պայմանագիրը**
 - Ներկայացնել Հայկական հարցը Փարիզի և Սան Ռեմոյի խորհրդաժողովներում:
 - Ներկայացնել և գնահատել Սերի պայմանագիրը:

Է. Մինասյան

**Պատմության հանձնաժողովի նախագահ,
պատմագիտության դոկտոր, պրոֆեսոր**

12.04.2016 թ.